

տատում են այդպիսի մի գրական աւանդութեան գոյութիւնը ժԿ. դարից ոչ ուշ, հաւանորէն յայտաւոր քական բնաւորութեամբ: Արդեօ՞ք դա այն Գորգ իշխանն է, որին յիշում է և Ուռհայեցին իբրև Վասակ Պահլաւունու ազատներից մէկը, որ ժամանակակից կ'լինի և Վասիլ կայսեր, դժուար է ասել: Հաւուց Թառի մի մասի «արքայաշէն» լինելու աւանդութիւնը կար մինչև ժԸ. դարու սկիզբը<sup>(1)</sup>:

Մանուէլ Բջնեցու մնացած տեղեկութիւնները հասկնալի են վերև մէջ բերուած արձանագրութեամբ և մեր սրբութեան հետ կապուած «Ձորս ըստ պատկերի քում ըստեղծեր» շարականով<sup>(2)</sup>: Պատկերի ծագման պատմութիւնը Յովհաննէս առաքեալի ձեռքով, նոյնանում է արձանագրութեան հետ. իսկ զանձի վերև մէջ բերուած 6-8 տողերը՝ Վահրամ պատանու Հոռոմ ուղարկուելու և վերապատուելու հատուածով, առնուած է արձանագրութիւնից և շարականից, միայն սխալ հասկացուած և մեկնուած նորա կողմից: «Վահրամ պատանի» խօսքերը զանձի մէջ արձանագրութեան վերջին խօսքերն են, որ վերագրուած են Գրիգոր Վկայասէրին Մանուէլ Բջնեցու կամ մի այլ ազբիւրի կողմից, իսկ Սիմէոն կաթողիկոսը, որ Վկայասէրին նոյն իսկ վանքի առաջին վանահայր է համարում ՆՀԻ = 1023 թուին, պատմական անկարելիութիւն է, քանի որ այդ թուականներին նա մանուկ էր կամ նոյն իսկ, գուցէ ծնուած չէր, մանաւանդ գիտենք, որ Գրիգոր Վկայասէրը երիտասարդական հասակում ամուսնացած էր և աշխարհական<sup>(3)</sup>: Ուրեմն եւ «Գրիգոր-Վահրամ պատանին» խօսքերը Մագիստրոսի նոյնանուն որդու հետ կապ չունին, այլ անձանագրութեան գրչի աւանդն է<sup>(4)</sup>, պատահաբար միայն նոյն Վկայասիրի անունն հետ: Աւելացնենք նաեւ, որ ամենևին յայտնի չէ, թէ Վկայասէրը պատանեկութեան ժամանակ Գրիգոր կոչուած լինի. ընդհակառակ հայրը որդուն

«Վահրամ», «Վեստ Վահրամ» է անուանում<sup>(1)</sup>. Գանձակեցին էլ հայրապետական կոչման հետ է կապում Գրիգորիս անունը<sup>(2)</sup>:

Ինչ վերաբերում է Բջնեցու «իսկ սուրին որդի յոյժ վերապատուի ի գահըն Հոռոմի» խօսքերին, առնուած է շարականից. Մագիստրոսն ընդունելով «զտիպն անձային», տօն է կատարում և երգում է՝

«Ձերգըս շարականին, Ձորս ըստ պատկերին, որք ի կարգ խաչին:

Դու տը միածին զտիպ քո բերկրածին, տաճար քո կազմին.

Ձնորոգեալ անձին տաճարս այս լիցին քեզ ի բնակութի:

Եւ կեցո զորդին, քում ար ծառային, զտիպ քո բերդին.

Ձպատուեալն ի Հոռոմին, անդ ուր կա շիրիմ հօտոյ (s!) վիմին»:

Մանուէլ Բջնեցին, գրեթէ բառացի, շարականից առնելով այս հատուածը, բացարձակ հակասում է ինքն իրեն՝ Հոռոմը նոյնացնելով Իտալիայի մայրաքաղաքի հետ, մինչդեռ իւր իսկ խօսքերով սրբութեան ընծայողը Վասիլ արքան էր. ժԱ. դարու առաջին կիսում Հայերը յարաբերութիւն չունէին Հոռոմի հետ. Լամբրոնացին էլ շարականի «զոր ի Հոռոմայ գահիցն վերապատուեցեր» հասկանում է Բիւզանդիայի մշտքով<sup>(3)</sup>: Մանուէլի սխալ բացատրութեան նպաստել է «կեցո զորդի ծառայի քո» խօսքերը, վերագրելով այն Մագիստրոսի որդուն, որ անկարելի է, ոչ միայն վերելի բացատրութիւններով, այլ եւ ամբողջ շարականի բովանդակութիւնից դատելով, որ քիչ յետոյ կ'տեսնենք:

Թովմա Մեծոփեցու տուած տեղեկութիւնը մեր պատկերի ծագման աւանդութեամբ նոյնանում է արձանագրութեան հետ, իսկ Հայաստան բերելու մասով՝ բուրովին տարբեր: Ո՞ր Աշոտ թագաւորն է Հոռոմոց թագաւորից նուէր ստացել և ո՞վ է Կիւրապաղատ իշխանը, որի ձեռքով բերուած է ընծան. արդեօ՞ք ակնարկ է այդ Աշոտ առաջին (886 թ.) և Բարսեղ Ա. կայ-

(1) Շահիս. Բ. 293.  
 (2) Ամբողջութիւնը տ. Շարական էջմիածին. 1861. եր. 495.  
 (3) Ուռհայեցի. Վաղարշ. 154.  
 (4) Այս եզրակացութեան հասել էինք առանց ուշադիր լինելու Ալիշանի կարծիքին (Այր. 355), որ յետոյ նկատեցինք:

(1) Կոստանեան. Գրիգոր Մագիստրոսի թղթեր. 235. 237.  
 (2) Դուկ. հրատ. 89.  
 (3) Թուղթ առ Լեւոն, ինչպէս եւ առ Ոսկան միայնակեաց: